

ձեռք ակնապարար ճշտութեամբ. ձեռք տուի, դեռ տաք էր այնտեղ. յանկարծ մատներս շօշափեցին մի փոքրիկ առարկայ, նրա գլխի սանրն էր մնացել՝ կարծես ինձ ասելու, ինձ համողելու համար, թէ նա այստեղ էր... վերցրի, ջերմութեամբ համբուրեցի։ Այո, այո, նա այստեղ էր, երևի կեանքը, իրականութիւնը նոյնպէս իր երազներն ունի, շատ անգամ աւելի գեղեցիկ, աւելի գրաւիչ, քան քնի երազները։ Իմ երազը զարմանալի էր. նրանից մնացել էր մի սքանչելի բուրմունք, որ լցրել էր իմ սենեակի օդը, պարուրել էր ինձ, որի մէջ ես նրստած էի այժմ անչափ երջանկութիւնից հարբած։ Որքան ապրեցի... Էութիւնս յոգնած էր, ծանրացած գլուխս ընկաւ բարձի վրայ և այն փոքրիկ սանրը կրծքիս պինդ-պինդ սղմած՝ քնեցի խորը, երջանիկ քնով։

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

(Գը շարունակուի)

Գ Ո Ւ Ն Ս Ց Օ Ր

Հանգաւ երազ... Ահա կրկին դունատ օր
Նայում է ինձ աչքովն իր թաց ու պղտոր...
Թռան, կորան զուարթունքներն հրածին,
Որ իմ տխուր կեանքիս քնում ծաղկեցին...

Բայց ով էին և ո՞ր երկրից բոց, անհոն,
Եւ ո՞ւր թռան իրենց թևովն այն լոյսի.
Չկար կեանքս, այլ էր միաբոս, վիշտ՝ հեռուն,
Վառում էի առանց ցաւի և յոյսի։

Բայց, անի, ինչո՞ւ եկար, ցերեկ, այսպէս վաղ,
Իգճար, էլ չեմ ուզում ապրել ես արթուն,
Մարիբ, գնահ, ինչպէս ընկերդ անուրախ
Անցաւ երեկ՝ քեզ պէս տխուր, ապարդիւն...

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՉԵԱՆ